ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

ՈՐՈՇՈՒՄ N 49

08 հունիսի 2021 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ (ԲՆԱԿԱՎԱՅՐ՝ ԱՆԻՊԵՄԶԱ) ՀՈՂԵՐԻՑ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ՝ 08-013-0101-0027) ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՕՏԱՐԵԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 56-րդ հոդվածի 5-րդ, 8-րդ մասերով, 67-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին

որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող /բնակավայր՝ Անիպեմզա/ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված գործառնական նշանակության (կադաստրային ծածկագիր 08-013-0101-0027) 0.04 հեկտար հողամասը (հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Անի համայնք, Անիպեմզա բնակավայր 1-ին փողոց 2-րդ նրբանցք N 52 հողամաս, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 02042021-08-0022) արտադրամաս կառուցելու նպատակով օտարել աճուրդով:
2. Հողատարածքի մեկնարկային գին սահմանել հողի կադաստրային արժեքի 50 %-ի չափով՝ 28400 (քսանութ հազար չորս հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝ ... 9	Դեմ՝ ... 0	Չեռնպահ՝ ... 0
Ն. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ			
Ա. ԱՐՍԵՆՅԱՆ			
Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ			
Կ.ՀՈՎՍԵՓՅԱՆ			
Մ.ՂԱԶԱՐՅԱՆ			
Գ.ՂԶՐՈՅԱՆ			
Բ.ՄԵԼԻՔՅԱՆ			
Ա.ՆԱԶԱՐՅԱՆ			
Ա. ՆԻԿՈՅԱՆ			
Ա.ՈՒՌՈՒՄՅԱՆ			
Վ.ՍԱՀԱԿՅԱՆ			
Ա. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ			
Զ.ՍԱՐԳՍՅԱՆ			
Ա.ՎԱՐՈՍՅԱՆ			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021 թվականի հունիսի 08
Քաղաք Մարալիկ